Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 11.01.2021 թվականի որոշման
Գործում է 18.01.2021 թվականից

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի
միջնորդությամբ
Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի հիմնական և լրացուցիչ ծառայությունների մատուցման

Ս Ա Կ Ա Գ Ն Ե Ր

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սակագների կարգավորման առարկան

1.1. Սույն սակագները սահմանում են «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Բանկ), որպես արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի (այսուհետ՝ Համակարգ) Հաշվի Օպերատորի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա) վերապահված գործառույթների միջնորդավորման շրջանակներում, Համակարգի միջոցով մատուցվող ծառայությունները:

2. Սակագների կիրառման ոլորտը

2.1. Սույն սակագների պահանջները կիրառվում են այն թողարկողների, հաշվետերերի և այլ անձանց նկատմամբ, ովքեր օրենսդրությամբ, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով օգտվում են Բանկի կողմից մատուցվող սույն սակագներով սահմանված ծառայություններից:

2.2. Բանկի կողմից Համակարգի միջոցով մատուցվող ծառայություններից օգտվելիս Բանկի նկատմամբ հաշվարկվում են միայն Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված սակագները:

2.3. Առանձին հաճախորդների խմբերի համար վարչության որոշմամբ կարող են սահմանվել սույն կանոններում սահմանված սակագներից տարբերվող սակագներ, ընդ որում՝ վարչության որոշմամբ պետք է սահմանվեն այդ սակագների տրամադրման չափանիշները, որոնք կիրառելի կլինեն հաճախորդների տվյալ խմբի նկատմամբ:

3. Ծառայությունների դիմաց վճարվող դրամական միավորը

3.1. Սույն սակագներով սահմանված Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումը իրականացվում է ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից վճարումների դեպքերի, որոնք կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով (ԱՄՆ դոլար, Եվրո), ինչպես նաև ռուսական ռուբլիով: Արտարժույթով վճարման դեպքում ՀՀ դրամով արտահայտված գումարները վերահաշվարկվում են համապատասխան արտարժույթի՝ հաշիվը դուրս գրելու օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով:

3.2. Եթե Բանկի կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվում է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և/կամ ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ

օրվա համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան սակագինը:

4. Սակագներում օգտագործվող հիմնական հասկացությունները

4.1. «Սակագին». Թողարկողի, Հաշվետիրոջ կամ այլ անձի կողմից Բանկին՝ վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափ՝ արտահայտված համապատասխան ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով կամ ՀՀ դրամով:

4.2. «Հաճախորդ». Թողարկող, Հաշվետեր կամ այլ անձ, որն օգտվում է Բանկի կողմից մատուցվող սույն սակագներով սահմանված ծառայություններից:

4.3. «Ծառայության գին». Բանկի կողմից թողարկողներին և հաշվետերերին մատուցվող միջնորդավորված ծառայությունների համար վճարման ենթակա գումար:

4.4. Սույն սակագներում կիրառվող այլ հասկացությունները ունեն Օրենքով, Կենտրոնական դեպոզիտարիայի այլ կանոններով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված նշանակությունները:

5. Ծառայությունների դիմաց վճարման կարգը

5.1. Սույն սակագներով սահմանված ծառայությունների վճարումն իրականացվում է անկանխիկ կամ կանխիկ ձևով:

5.2. Այն հաճախորդներից, որոնք Բանկում ունեն բանկային հաշիվներ, սահմանված սակագները Բանկի կողմից անակցեպտ գանձվում են ՀՀ դրամով Հաճախորդի հաշվից: Հաճախորդի հաշվին սակագների գանձման համար անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ դրանք անակցեպտ գանձվում են հաշվին մուտքագրված գումարից:

5.3. Սույն սակագներով նախատեսված վճարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը (բացառությամբ՝ 4-րդ և 13-րդ կետերով սահմանված վճարների) և ենթակա են ավելացված արժեքի հարկով հարկման ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Այն դեպքում, երբ սույն սակագներով համապատասխան հաշվարկված գումարները՝ ավելացված արժեքի հարկը ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և նաև որոշակի լումաներից, ապա լումաները կլորացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

5.4. Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման դեպքում արժեթղթերի հաշվառման (ռեեստրի վարման) սակագինն ամբողջ ամսվա համար գանձվում է այն Հաշվի օպերատորից, որի հետ ամսվա վերջին օրվա դրությամբ թողարկողն ունի ռեեստրի վարման գործող պայմանագիր: Հաշվետիրոջ (այդ թվում՝ անվանատիրոջ) հաշիվներում առկա արժեթղթերի պահպանման սակագինը չի հաշվարկվում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի նկատմամբ: Անվանատիրոջ մոտ նշված անձանց պատկանող արժեթղթերի առկայության դեպքում վերջինս դրանց մնացորդների մասին ՍԻ-ԲԻ-ԷՅ-ՆԵԹ ցանցով տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային՝ մինչև հաշվետու ասմվան հաջորդող առաջին

աշխատանքային օրվա ավարտը: Բանկի կողմից սույն կետում նշված սուբյեկտներին պատկանող արժեթղթերի պահպանման սակագինը հավելման ենթակա չէ:

5.5. Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարների գանձումը կատարվում է ծառայության մատուցման վերաբերյալ համաձայնության ձեռք բերման (պայմանագրի կնքման) պահին, բացառությամբ ամսական հաշվարկվող վճարների, որոնք պետք է վճարվեն մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը ներկայացված հաշվին համաձայն՝ հաշիվը ներկայացնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, այն առանձնահատկությամբ, որ ռեեստրի վարման համար պայմանագրի կնքման պահին (1.2 “Բաժնետերերի (փայերի) ռեեստրի վարում և պահպանում” և 1.3 “Պարտատոմսերի ռեեստրի վարում և պահպանում”) գանձվում է կանխավճար՝ տվյալ ամսվա (հաշվարկված օրական կտրվածքով) և հաջորդող երկու ամիսների համար:

5.6. Ռեեստրի վարման կամ պահառության դիմաց առաջին վճարների հաշվարկման համար հիմք են ընդունվում պայմանագրի կնքման (վերակնքման) օրվա տվյալները: Հետագա վճարների հաշվարկման համար հիմք են ընդունվում հաշվետու ամսվա վերջին բանկային օրվա տվյալները:

5.7. Թողարկողի կողմից սույն սակագներով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա ժամկետներում նախատեսված վճարները երեք ամիս անընդմեջ չկատարման, ուշացման կամ մասամբ կատարման դեպքում Բանկը տվյալ վճարման պարտավորությունը չկատարողի կամ ոչ պատշաճ կատարողի նկատմանբ հաշվարկում է տույժ՝ յուրաքանչյուր ամսվա ժամկետանց պարտավորության համար՝ 1000 ՀՀ դրամի չափով, ընդ որում՝ ամսական տույժը յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվում է 1000 ՀՀ դրամ անկախ ուշացման օրերի քանակից: Այն հաշվետիրոջ նկատմամբ, որին մատուցված ծառայությունների դիմաց սույն սակագներով տվյալ ամսվա վերջին օրվա դրությամբ հաշվարկված գումարը կազմում է 500 ՀՀ դրամ և ավելի, նրա կողմից սույն սակագներով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց յուրաքանչյուր ամսվա վճարման ենթակա գումարի ուշացման համար (անկախ ուշացման օրերի քանակից) հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա գումարի (առանց տույժերի) 5%-ի չափով:

5.8. Բանկն իրավունք ունի թողարկողի և/կամ հաշվետիրոջ կողմից սույն սակագներով սահմանված վճարումներն ուշացնելու դեպքում վճարման ենթակա գումարներն անակցեպտ կարգով գանձել թողարկողի և/կամ հաշվետիրոջ՝ Բանկում գրանցված այլ դրամային, արտարժույթային կամ արժեթղթերի հաշիվներից:

5.9. Սույն սակագներով չսահմանված ծառայությունների միջնորդավորման դեպքում Բանկի սակագինը սահմանվում է «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված սակագին x (բազմապատկած) 1.1 գործակից»:

6. Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում վճարման առանձնահատկությունները

6.1. Բանկն իրավունք ունի կասեցնել սույն սակագներով նախատեսված ծառայությունների մատուցումը իր միջնորդությամբ ռեեստրի վարման պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող թողարկողներին, եթե վերջիններս Բանկի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություն:

6.2. Բանկն իրավունք ունի կասեցնել սույն սակագներով նախատեսված ծառայությունների մատուցումը իր միջնորդությամբ արժեթղթերի պահառության պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող հաշվետերերին, եթե վերջիններս Բանկի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություն:

6.3. Բանկի կողմից սույն սակագների 6.1 և 6.2 կետերով նախատեսված ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Բանկն անհապաղ այդ մասին հայտնում է Կենտրոնական դեպոզիտարիային, ինչի արդյունքում դադարում է Բանկի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»-ի համաձայն վերջինիս կատարվող վճարների հաշվարկը՝ կասեցված ծառայությունների ծավալին համապատասխան: Ծառայությունների կասեցման դեպքում կասեցման պահից դադարեցվում է նաև ծառայությունների դիմաց գանձվող վճարների և տույժերի հաշվարկը:

6.4. Բանկի կողմից սույն սակագների 6.1 և 6.2 կետերով նախատեսված ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Համակարգից տեղեկություններ ստանալու և Թողարկողի արժեթղթերի հաշվետերերի ռեեստրում գործողություններ կատարելու վերաբերյալ Բանկին հանձնարարականներ տալու իրավասություն ունեն միայն ՀՀ կենտրոնական բանկը, Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատարանները, նոտարները, հետաքննության և նախաքննության մարմինները՝ ՀՀ Քաղաքացիական և Քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ու դեպքերում:

6.5. Բանկն իրավունք ունի վերսկսել թողարկողին և հաշվետիրոջը ծառայությունների մատուցումը, այդ թվում վերակնքել ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս այն չվերակնքած թողարկողների հետ հետևյալ դեպքերում.

6.5.1. Եթե ռեեստրի վարման պայմանագիրը դերևս վերակնքված չէ, ապա $Գ_1$=ԺՊ+ՊՎՎ բանաձևով հաշվարկված վճարման ենթակա գումարը ($Գ_1$) ամբողջությամբ Կենտրոնական դեպոզիտարիային անմիջականորեն կամ Բանկի միջնորդությամբ վճարելուց կամ հաճախորդի կողմից ընդունելի երաշխիքների ներկայացումից հետո: Նշված բանաձևում ԺՊ–ն կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարն է՝ գումարած հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար, իսկ ՊՎՎ -ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ ՀԴxՕ/365, որտեղ Օ-ն՝ կասեցման օրերի քանակն է, իսկ ՀԴ-ն հիմնական դրույքաչափն է, որը կազմում է.

ա)80,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 1-ից մինչև 99,

բ) 160,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 100-ից մինչև 499,

գ) 300,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 500 և ավելի,

6.5.2. Եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է, ապա $Գ_2$=ԺՊ+ՊՎՎ բանաձևով ($Գ_2$) հաշվարկված վճարման ենթակա գումարը Բանկին վճարելուց հետո: Նշված բանաձևում ԺՊ–ն՝ կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարն է՝ գումարած հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար,ՊՎՎ-ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ ՀԴxՕ/365, որտեղ Օ-ն՝ կասեցման օրերի քանակն է,ՀԴ-ն հիմնական դրույքաչափն է, որը հաշվարկվում է 6.5.1 կետի ա,բ,գ մասերում նշված հիմնական

դրույքաչափերին ավելացնելով համապատասխանաբար 20,000 ՀՀ դրամ, 40,000 ՀՀ դրամ և 50,000 ՀՀ դրամ:

6.5.3. Եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է, ապա $Գ_3$=ԺՊ+ՊՎՎ բանաձևով ($Գ_3$) հաշվարկված վճարման ենթակա գումարը Բանկին վճարելուց հետո, որտեղ ՊՎՎ-ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ ՀԴxՕ/365, ընդ որում՝ ՀԴ-ն հիմնական դրույքաչափն է, որը կազմում է վերսկսման պահին հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.009%-ը, Օ–ն կասեցման օրերի քանակն է, ԺՊ–ն՝ կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարն է՝ գումարած հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար.

6.5.4. Ընդ որում՝ 6.5.1, 6.5.2, 6.5.3 ենթակետերով վճարման ենթակա գումարի մասնակի վճարման դեպքում առաջին հերթին մարման են ենթակա ժամկետանց պարտավորությունների գումարը (ԺՊ), այնուհետ՝ պայմանագրի վերսկսման վճար (ՊՎՎ):

6.7 Ծառայությունների մատուցման՝ սույն սակագների 6.1 և 6.2 կետերով նախատեսված կարգով կասեցման ժամանակահատվածում Թողարկողի կամ Հաշվետիրոջ կողմից օրենքով սահմանված դեպքերում պայմանագիրը լուծելու դեպքում.

1) Թողարկողը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը Բանկին վճարել 6.5.2 կետի համաձայն հաշվարկված գումարը և մարել Բանկի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է.

2) Հաշվետերը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը Բանկին վճարել 6.5.3 կետի համաձայն հաշվարկված գումարը և մարել Բանկի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե պահառության պայմանագիրը վերակնքված է:

6.8 Սույն սակագներով սահմանված ծառայությունների սակագների յուրաքանչյուր փոփոխության դեպքում Բանկը պարտավոր է այդ մասին պատշաճ ծանուցել իր հետ ռեեստրի վարման կամ պահառության պայմանագրային հարաբերություններում գտնվող բոլոր թողարկողներին և հաշվետերերին: Պատշաճ է համարվում իր ինտերնետային կայքում կատարված փոփոխության և/կամ լրացման կամ նոր խմբագրությամբ սակագների տեղադրումը, ինչպես նաև Բանկի գործունեության վայրում վերոնշյալ սակագների հրապարակումը:

ԲԱԺԻՆ 2. ՍԱԿԱԳՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

	Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
	ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
1.	**Արժեթղթերի ընդհանուր հաշվառման (ռեեստրավարման) ծառայություններ**		
1.1.	**Թողարկողի արժեթղթերի ռեեստրի սկզբնական տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում**		
	Թողարկողի վերաբերյալ տվյալների գրանցում ծրագրային Համակարգում		**Անվճար**
	Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում		**Անվճար**
1.2.	**Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, ներդրումային ֆոնդերի փայերի)[1] հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում).** (Տվյալ դասի տեղաբաշխված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում առկա հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ)		
	Բաժնային արժեթղթերի՝ մասնակցության վկայագրերի, փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ/ ամսական	1-ից մինչև 5-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ/ 6 000 ՀՀ դրամ
			6-ից մինչև 49-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ/ 8 000 ՀՀ դրամ
			50-ից մինչև 99-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ/ 12 000 ՀՀ դրամ
			100-ից մինչև 199-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ/ 18 000 ՀՀ դրամ
			200-ից մինչև 499-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ/ 25 000 ՀՀ դրամ

[1] Բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի

			500-ից մինչև 999-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ/ 30 000 ՀՀ դրամ
			1000 և ավելի տեղաբաշխված արժեթղթերի հաշիվների (փայատերերի) քանակ/ 50 000 ՀՀ դրամ
1.3.	**Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում).** (Արտարժույթով արտահայտված անվանական արժեք ունեցող պարտատոմսերի հաշվառման (արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման և պահպանման) սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ամսվա վերջին օրվա համար ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով)		
	Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Տեղաբաշխված պարտատոմսերի յուրաքանչյուր դասի համար ընդհանուր անվանական արժեք / ամսական	մինչև 1 550 000 000 ՀՀ դրամը / 0,003%
			1 550 000 000 ՀՀ դրամից ավելի/ 50 000 ՀՀ դրամ
1.4.	**Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում** (սակագինը վճարում է այն հաշվի օպերատորը, որի միջնորդությամբ վերակնքվել է պայմանագիրը)		
	Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար/մեկ փոխանցում	6 000 ՀՀ դրամ
2.	**Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայություններ** (բացառությամբ կարգավորվող շուկայի միջոցով տեղաբաշխված, ինչպես նաև վերակազմակերպման հիմքով արժեթղթերի փոխարկումն ապահովելու համար լրացուցիչ տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառման դեպքերի, ընդ որում՝ արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման արդյունքում տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայությունների սակագինը տեղաբաշխման գործընթացի վերջում վերահաշվարկվում է ընդհանուր անվանական ծավալի սկզբունքով**).**		
2.1.	**Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում (բաժնետոմսերի տեղաբաշխում բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)**		
	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,1%, նվազագույնը՝ 30 000 ՀՀ դրամ
			3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 3 000 000 ՀՀ դրամ
2.2.	**Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում (պարտատոմսերի տեղաբաշխում, բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)**		
	Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 30 000 000 000 ՀՀ դրամը / 0,01%, նվազագույնը՝ 30 000 ՀՀ դրամ
			30 000 000 000 ՀՀ դրամից ավելի/ 3 000 000 ՀՀ դրամ
2.3.	**Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում**		
	Հրապարակային առաջարկի	տեղաբաշխվող բաժնետոմսերի	մինչև 1 000 000 000 ՀՀ դրամը / 0,1%

	միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	(փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	1 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 1 000 000 ՀՀ դրամ
2.4.	**Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում**		
	Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	մինչև 4 000 000 000 ՀՀ դրամը / 0,01%
			4 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 400 000 ՀՀ դրամ
3.	**Թողարկողի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում**		
3.1.	**Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում** (ներառում է արժեթղթերի փոխարկումը (այդ թվում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման, արժեթղթերի համախմբման (կոնսոլիդացիա) և բաժանման հիմքով), թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերը մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերիփոխարկումը, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման այն դեպքի, երբ արժեթղթերի քանակի և անվանական արժեքի փոփոխություն տեղի չի ունենում) արդյունքում արժեթղթերի փոխարկումը, թողարկողի՝ իր կողմից թողարկված արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ձեռքբերումը, հետգնումը և մարումը կամ չեղյալ համարումը: Ընդ որում՝ փոխարկման դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկման արդյունքում գրանցվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը, բացառությամբ բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման հիմքով բաժնետոմսերի փոխարկման դեպքերի: Բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման պայմանավորված կորպորատիվ գործողության դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկվող, արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը):		
	Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի)	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարային) արժեք	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,1%, նվազագույնը՝ 30 000 ՀՀ դրամ
			3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 3 000 000 ՀՀ դրամ
	Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	Կորպորատիվ գործողության առարկա՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալ	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,01%, նվազագույնը՝ 30 000 ՀՀ դրամ
			3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 300 000 ՀՀ դրամ
	Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում (փակում)	Հաշիվ	Անվճար
4.	**Թողարկողի հարցման հիման վրա իր կամ իր կողմից թողարկված (տեղաբաշխված) արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման հետ կապված ծառայություններ**		
4.1	**Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում**		
	Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի		1 500 ՀՀ դրամ

	(անվանատերերի) ցուցակի տրամադրում՝ էլեկտրոնային եղանակով	Ցուցակ	
	Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում՝ ՝ առձեռն		3 000 ՀՀ դրամ
	Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում՝ փոստով		4 000 ՀՀ դրամ
	Գործառնության գրանցման արդյունքում արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում		Անվճար
4.2.	**Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի /առանց հիմքերի / տրամադրում,** ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, եթե տեղեկանքի տրամադրումը Կենտրոնական դեպոզիտարիա դիմելու անհրաժեշտություն չի առաջացնում.		
	տեղեկանքի տրամադրում՝ էլեկտրոնային եղանակով	1 տեղեկանք	5 000 ՀՀ դրամ
	տեղեկանքի տրամադրում՝ առձեռն	1 տեղեկանք	7 000 ՀՀ դրամ
4.3.	**Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի /առանց հիմքերի / տրամադրում,** ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, եթե տեղեկանքի տրամադրումը Կենտրոնական դեպոզիտարիա դիմելու անհրաժեշտություն է առաջացնում.		
	տեղեկանքի տրամադրում՝ էլեկտրոնային եղանակով	1 տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
	տեղեկանքի տրամադրում՝ առձեռն	1 տեղեկանք	12 000 ՀՀ դրամ
4.4	**Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով),** ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, եթե տեղեկանքի տրամադրումը Կենտրոնական դեպոզիտարիա դիմելու անհրաժեշտություն չի առաջացնում.		
	տեղեկանքի տրամադրում՝ էլեկտրոնային եղանակով	1 տեղեկանք	5 000 ՀՀ դրամ
	տեղեկանքի տրամադրում՝ առձեռն	1 տեղեկանք	7 000 ՀՀ դրամ

4.5.	**Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով),** ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ		
	տեղեկանքի տրամադրում՝ էլեկտրոնային եղանակով	1 տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
	տեղեկանքի տրամադրում՝ առձեռն	1 տեղեկանք	12 000 ՀՀ դրամ
4.6	**Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով),** ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, եթե տեղեկանքի տրամադրումը Կենտրոնական դեպոզիտարիա դիմելու անհրաժեշտություն չի առաջացնում.		
	տեղեկանքի տրամադրում՝ էլեկտրոնային եղանակով	1 տեղեկանք	6 000 ՀՀ դրամ
	տեղեկանքի տրամադրում՝ առձեռն	1 տեղեկանք	8 000 ՀՀ դրամ
4.7.	**Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով),** ընդ որում՝ սակագինը գանձվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրամադրվում են գործառնությունների հիմքերը կամ տեղեկանք գործառնությունների բացակայության վերաբերյալ.		
	տեղեկանքի տրամադրում՝ էլեկտրոնային եղանակով	1 տեղեկանք	15 000 ՀՀ դրամ
	տեղեկանքի տրամադրում՝ առձեռն	1 տեղեկանք	20 000 ՀՀ դրամ
5.	**Թողարկողի մասին տվյալների փոփոխությունների գրանցում Համակարգում (**ներառում է թողարկողի գտնվելու կամ գործունեության վայրի, բաժնետիրական ընկերությունների տեսակի, տնօրենի փոփոխության, ընկերության անվանման փոփոխության կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխությունը (արժեթղթերի փաստաթղթային ձևի փոփոխությունը ոչ փաստաթղթայինի և հակառակը))		
	Տվյալների փոփոխության մուտքագրում Համակարգ	միաժամանակ ներկայացված փոփոխությունների մեկանգամյա մուտքագրում	1 000 ՀՀ դրամ
	ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
6.	**Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում**		
	Շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար / յուրաքանչյուր գործընթացի համար	0,25 %, նվազագույնը՝ 30 000 ՀՀ դրամ
7.	**Թողարկողի հանձնարարագրի հիման վրա պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում**		
	Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված/բաշխված դրամական միջոցների գումարը / յուրաքանչյուր գործընթացի համար	0,025 %, նվազագույնը՝ 30 000 ՀՀ դրամ
8.	**Ծանուցում թողարկողին արժեթղթերի (փայերի) գործառնությունների մասին (արժեթղթերի (փայերի) փոխանցման հանձնարարականների և արժեթղթերի նկատմամբ իրավունքների**		

	սահմանափակումների վերաբերյալ)		
	Ծանուցում	Տարեկան	300 000 ՀՀ դրամ
9.	**Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում**		
	Հսկողության իրականացում	Տարեկան	750 000 ՀՀ դրամ

	ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
10.	**Հաշվետերերին մատուցվող արժեթղթերի (ինվեստիցիոն) հաշիվների վարման ծառայություններ**		
10.1	**Սեփականատերերի արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանման հետ կապված ծառայություններ**		
10.1.1	**Արժեթղթերի (փայերի) հաշվի բացում,փոփոխություն, պահպանում և փակում**		
	Արժեթղթերի հաշվի բացում (վերաբացում) Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
	Հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում (Այս ծառայության դիմաց սակագնի հաշվարկումը սկսվում է Հաշվի օպերատորի կողմից հաշվետիրոջ հաշվի բացման/վերաբացման պահից)	Յուրաքանչյուր օրվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք / ամսական	0,0008 % (նվազագույնը 50 դրամ)
	Արժեթղթերի հաշվի փակում		Անվճար
11.	**Կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ** (Փոխանցման սակագինը չի գանձվում այն դեպքերում, երբ աժեթղթեր փոխանցող/ստացող կողմ է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը)		
11.1.	**Բաժնետոմսերի (փայերի) հասարակ փոխանցում (ներառյալ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 11.3, 11.4 և 11.7 կետերով սահմանված դեպքերի (վճարում է փոխանցող/շահագրգիռ կողմը:)**Ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:		
		Գործարքի առարկա հանդիսացող	մինչև 1 000 000 ՀՀ դրամը / 1 500 ՀՀ դրամ

	Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում, (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)	արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք/ վճարում է փոխանցող կողմը, իսկ կանոններով սահմանված դեպքերում եթե հանձնարարականը ներկայացնում է միայնշահագրոգիռ կողմը, ապա վճարում է շահագրգիռ կողմը)	1 000 000 ՀՀ դրամից մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,1%, նվազագույնը՝ 2 000 ՀՀ դրամ
			3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 3 000 000 ՀՀ դրամ
11.2.	**Պարտատոմսերի հասարակ փոխանցում (ներառյալ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 11.3, 11.4 և 11.7 կետերով սահմանված դեպքերի (վճարում է փոխանցող/շահագրգիռ կողմը:** Ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:		
	Պարտատոմսերի փոխանցում, (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք /վճարում է փոխանցող կողմը (կամ շահագրոգիռ կողմը, իսկ կանոններով սահմանված դեպքերում եթե հանձնարարականը ներկայացնում է միայն շահագրգիռ կողմը, ապա վճարում է շահագրգիռ կողմը)	մինչև 2 000 000 ՀՀ դրամը / 1200 ՀՀ դրամ
			2 000 000 ՀՀ դրամից մինչև 4 000 000 000 ՀՀ դրամը / 0,01%, նվազագույնը՝ 1500 ՀՀ դրամ
			4 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 400 000 ՀՀ դրամ
11.3.	**Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում մեկ հաշվից մյուսին**		
	Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Հանձնարարագիր/վճարումը իրականցնում է յուրաքանչյուր կողմը	10 000 ՀՀ դրամ
11.4.	**Պորտֆելի փոխանցում՝ մեկ հաշվի օպերատորի մոտ բացված հաշվետիրոջ հաշվից այլ հաշվի օպերատորի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա ամբողջ մնացորդի փոխանցմամբ**		
	Պորտֆելի փոխանցում	Հանձնարարագիր/վճարումը իրականցնում է փոխանցող կողմը	6 000 ՀՀ դրամ
11.5.	**Բաժնետոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով**		
	Բաժնետոմսերի (փայերի) DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք/ վճարումն իրականցնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 1 000 000 ՀՀ դրամը/ 2 000 ՀՀ դրամ
			1 000 000 մինչև 2 000 000 000 ՀՀ դրամը / 0,2%
			2 000 000 000 ՀՀ դրամից ավել / 4 000 000 ՀՀ դրամ
11.6.	**Պարտատոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով**		

	Պարտատոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք/ վճարումն իրականցնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 10 000 000 ՀՀ դրամը/ 3 000 ՀՀ դրամ
			10 000 000 մինչև 2 000 000 000 ՀՀ դրամը / 0,02%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ
			2 000 000 000 ՀՀ դրամից ավել / 400 000 ՀՀ դրամ
11.7.	**Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում**		
	Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արյունքում արժեթղթերի փոխանցում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք/ վճարումը իրականցնում է գրավառուն	Մինչև 140 000 000 ՀՀ դրամը/ 0,3 % , նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ
			140 000 000 ՀՀ դրամից ավել / 450 000 ՀՀ դրամ
12.	**Արժեթղթերի գրավի իրավունքի , արժեթղթերի սառեցման, առևտրային արգելադրման, ինչպես նաև ձայնի իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններ**		
12.1.	**Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ հաշվետիրոջ անունով բացված հաշվում արժեթղթերի գրավի իրավունքի գրանցում**		
	Բաժնետոմսերի (փայերի) գրավի իրավունքի գրանցում	Գրավի առարկա բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք/վճարումը իրականացնում է գրավատուն/շահագրգիռ կողմը	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,1%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ
			3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 3 000 000 ՀՀ դրամ
	Պարտատոմսերի գրավի իրավունքի գրանցում	Գրավի առարկա պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է գրավատուն/շահագրգիռ կողմը	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,02%, նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ
			3 000 000 000 ՀՀ դրամից ավել / 600 000 ՀՀ դրամ
12.2.	**Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում**		
	Սառեցում	Սառեցված արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային յին) արժեք/վճարումը իրականացնում է հաշվետերը	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0,1%, նվազագույնը՝ 3000 ՀՀ դրամ
			3 000 000 000 ՀՀ դրամից ավելի / 3 000 000 ՀՀ դրամ

12.3	**Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում**		
	Առևտրային արգելադրում		անվճար
12.3.	**Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար**		
	Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում	Քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	0,5 %, նվազագույնը՝ 3000 ՀՀ դրամ
12.4.	**Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում**		
	Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում	Գրավադրված, սառեցված, առևտրային նպատակով արգելադրված և այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում հաշվարկային) արժեք	Անվճար
13.	**Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրում**		
13.1.	**Հաշվետիրոջ հարցման հիման վրա տվյալ հաշվի օպերատորի մոտ բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)**		
	Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում՝ հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի մասով (ռեեստրից քաղվածք))	քաղվածք	1 500 ՀՀ դրամ
	Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում	Հաշվետվություն	3000 ՀՀ դրամ
	Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	տեղեկանք	4 000 ՀՀ դրամ
	Հաշվետվություն արժեթղթերի հաշվում գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ	հաշվետվություն	3000 ՀՀ դրամ
	Գործառնության գրանցման արդյունքում (պայմանագրի կնքման արդյունքում քաղվածքի տրամադրում) նույն օրվա դրությամբ արժեթղթերի հաշվով կատարված գարծառնությունների մասին տեղեկանքի կամ հաշվից քաղվածքի տրամադրում	տեղեկանք և քաղվածք	Անվճար
13.2.	**Հաշվետիրոջ հարցման հիման վրա Բանկում բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների (բացառությամբ գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների) վերաբերյալ ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից տեղեկանքի տրամադրում (հիմքերով)**		

	Տեղեկանքի տրամադրում (էլեկտրոնային եղանակով)	տեղեկանք	6 000 ՀՀ դրամ
	Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով)	Տեղեկանք	10 000 ՀՀ դրամ
14.	**Անվանատիրոջ հաշիվների բացման և հաշվում առկա արժեթղթերի պահպանման հետ կապված ծառայություններ**		
14.1.	**Հաշվի օպերատոր չհանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում**		
14.1.1	Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	300 000 ՀՀ դրամ
14.1.2	Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		1 000 ՀՀ դրամ
14.1.3	Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանում	Յուրաքանչյուր օրվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք / ամսական	0,001%
14.2.	**Հաշվի օպերատոր հանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում**		
14.2.1	Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
14.2.2	Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
14.2.3	Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային արժեք / ամսական	0,001%

15	**Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահառուական ծառայություններ. (ծառայությունների շրջանակը կարող է տարբերվել՝ կախված օտարերկրյա պահառուից)** [2]		
15.1	**Հայաստանի Հանրապետության անունից թողարկված եվրոպարտատոմսերի պահպանում**[3]		
	Հայաստանի Հանրապետության անունից թողարկված եվրոպարտատոմսերի պահպանում	Սեփականատիրոջ (անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ/ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)	0,0013%
16	**Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղերի պահպանման և այդ արժեթղթերով գործարքների սպասարկման ծառայություններ**		
	Օտարերկրյա պահառուի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային առաջարկվող ծառայությունների (ծառայությունների ցանկը սահմանվում է ըստ օտարերկրյա պահառուի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային առաջարկվող ծառայությունների)	Օտարերկրյա պահառուի կողմից սահմանված միավոր	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 30% հավելագին

[2] Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին սույն գլխով մատուցվող ծառայությունների համար վճարումը կատարվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կրած փաստացի ծախսերին համապատասխան՝ առանց ծառայությունների մատուցման հավելագին հաշվարկելու:

[3] ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված ռեպո/ հակադարձ ռեպո գործարքի արդյունքում ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի պահպանման սակագինը հաշվարկվում է արժեթղթերը փոխանցած կողմի նկատմամբ: